ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կատարողական վարույթի ընթացքում, ինչպես նաև սույն օրենքով կարգավորվող դատավարական իրավահարաբերություններում կիրառվում է սույն օրենքի այն դրույթը, որը գործում է համապատասխան դատավարական կամ կատարողական գործողության կատարման կամ որոշման կայացման ժամանակ»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2. Հարկադիր կատարման ենթակա ակտերը**

1. Հարկադիր կատարման ենթակա են՝

1) քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը, բացառությամբ իրավաբանական անձին կամ քաղաքացուն սնանկ ճանաչելու և մրցութային վարույթ սկսելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև վարչական գործերով կայացված դատական ակտերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսված գործերով դատական ակտերի.

2) դատական տուգանք կիրառելու մասին դատարանի որոշումները, ինչպես նաև քրեական գործերով դատարանի դատավճիռները և որոշումները՝ գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների մասով.

3) արբիտրաժային տրիբունալների վճիռները.

4) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով.

5) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի, ինչպես նաև միջազգային արբիտրաժի քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները.

6) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները.

7) անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

2. Հարկադիր կատարման ենթակա չեն սույն հոդվածի առաջին մասում նշված այն ակտերը, որոնք չեն պարունակում դրամական միջոցների կամ այլ գույքի փոխանցման կամ որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու պահանջ որևէ սուբյեկտի նկատմամբ:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 4. Հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը**

Հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը դատարանի վճիռը, դատավճիռը, որոշումը, դատարանի արձակած վճարման կարգադրությունը (այսուհետ՝ դատական ակտ), ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, 7-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը, 30-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 58-րդ հոդվածի 1-ին և 3.1-րդ մասերը, 62-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին ու 2-րդ պարբերությունները, 63-րդ հոդվածն ու վերջինիս վերնագիրը, 64-րդ հոդվածի վերնագիրը, 2-րդ և 4-րդ մասերը, 65-րդ հոդվածի վերնագիրը, 2-րդ մասի 2-րդ նախադասությունը և 67-րդ հոդվածի 8-րդ մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 65-րդ հոդվածի 3-րդ մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «կայացվել է դատական ակտը կամ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 61.1-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը, 60-րդ և 73-րդ հոդվածները «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտով կամ» բառերով:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման կամ կատարողական վարույթն ավարտելու մասին դիմում ներկայացնելը.»:

Հոդված 8. Օրենքի 3-րդ գլխում՝

1) վերնագիրը «ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ» բառից առաջ լրացնել «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.2-րդ հոդվածով.

«**Հոդված 16.2. Դատական ակտի կատարումը**

1. Դատարանը դատական ակն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ այն ուղարկում է հարկադիր կատարման ծառայության համապատասխան ստորաբաժանում (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն), բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը տալիս է կատարողական թերթ՝ այն ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետության դատարանի վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության այն դատարանը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում է կայացրել տվյալ օտարերկրյա պետության դատարանի վճիռը և որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ:

4. Եթե կատարման ենթակա է օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը՝ վնասի հատուցման կամ այլ գույքային բռնագանձման մասով, ապա կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով այդ դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում կայացրած Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը:

5. Եթե Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի հիմնադրման վերաբերյալ միջազգային պայմանագրով կամ դրա կանոնակարգերով նախատեսված է այդ դատարանի դատավճիռների կամ որոշումների կատարում, ապա դրանց վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը՝ պահանջատիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցչի դիմումը ներկայացնելուց հետո անհապաղ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ միջազգային դատարանը, իր կանոնակարգերով սահմանված կարգով, տվել է համապատասխան կատարողական թերթ, որը պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար:

6. Դատարանի և հարկադիր կատարման ծառայության միջև փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու միջոցով:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «այն կատարման ներկայացնելու» բառերը փոխարինել «հարկադիր կատարման ծառայություն կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելու» բառերով:

Հոդված 12. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը «Կատարողական» բառից առաջ լրացնել «Դատական ակտը կայացրած կամ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 23. Դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելու ժամկետը**

1. Դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում առաջին անգամ կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը.

2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ.

3) լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը.

4) դատարանը որոշում է կայացրել դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

5) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար:

Պարտապանի պարտականությունների տարաժամկետում կամ պարբերական կատարում նախատեսող դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում կարող է ներկայացվել պարտականությունների տարաժամկետման կամ պարբերական կատարման ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև այդ ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում»:

2. Սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կատարողական վարույթն ավարտվելու դեպքում դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման նոր դիմում չի կարող ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո:»:

Հոդված 14. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) վերնագիրն ու 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 24. Դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնումը**

1. Պահանջատիրոջ կողմից դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:».

2) 2-րդ մասի 1-ին նախադասությունը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտը կայացրած կամ» բառերով:

Հոդված 15. Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հարկադիր կատարողի որոշման պատճենը ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ:

Հարկադիր կատարողի որոշումը համարվում է պատշաճ ձևով ուղարկված, եթե հանձնվել է հետևյալ եղանակներից մեկով.

1) պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հասցեատիրոջ համաձայնությամբ՝ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, դատական ակտում կամ կատարողական թերթում կամ տվյալ կողմի նշած հասցեով.

2) առձեռն.

3) կողմի համապատասխան դիմումի դեպքում՝ էլեկտրոնային փոստով, հարկադիր կատարման ծառայությանը պատկանող էլեկտրոնային փոստի հասցեից:

Կատարողական վարույթի կողմերը վարույթի ընթացքում հարկադիր կատարողից որևէ հաղորդագրություն ստանալուց կամ հարկադիր կատարողին դատական ակտում կամ կատարողական թերթում նշվածից տարբերվող հասցե հայտնելուց հետո իրենց հասցեն (էլեկտրոնային փոստի հասցեն) փոխելու դեպքում պարտավոր են այդ մասին հայտնել հարկադիր կատարողին:

Եթե պարզվում է, որ հասցեատերը հարկադիր կատարողից որևէ հաղորդագրություն ստանալուց կամ հարկադիր կատարողին դատական ակտում կամ կատարողական թերթում նշվածից տարբերվող հասցե հայտնելուց հետո փոխել է իր հասցեն (էլեկտրոնային փոստի հասցեն), սակայն այդ մասին չի հայտնել հարկադիր կատարողին, կամ էլեկտրոնային փոստով ստացվել է ավտոմատ հետադարձ ծանուցում այն մասին, որ տվյալ հասցեն գոյություն չունի, ապա փաստաթղթերը համարվում են հանձնված՝ հասցեատիրոջ վերջին հայտնի հասցեով (առկայության դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստի հասցեով) ուղարկվելու և հարկադիր կատարման ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու դեպքում:

Հասցեատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեն համարվում է փոխված, եթե պարզվում է, որ տվյալ հասցեն պատկանում է այլ անձի»:

Հոդված 16. Օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասը, 32-րդ հոդվածի 2-րդ մասը, 67-րդ հոդվածի 5-րդ մասը և 73-րդ հոդվածի վերնագիրը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտը կամ» բառերով:

Հոդված 17. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ պահանջատիրոջից կամ նրա ներկայացուցչից դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում, իսկ օտարերկրյա դատարանի դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և կատարելու վերաբերյալ միջնորդությունը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից բավարարվելու, ինչպես նաև միջանկյալ դատական ակտի հիման վրա կատարողական թերթ տրվելու դեպքերում՝ տվյալ դատարանից կատարողական թերթ ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:»:

Հոդված 18. Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 31. Կատարողական թերթը այն տված դատարան, իսկ կատարողական թերթի կատարման դիմումը՝ դիմումատուին վերադարձնելը**

1. Եթե դատարանի ուղարկած կատարողական թերթը չի համապատասխանում սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կամ չեն պահպանվել սույն օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված պահանջները, հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է կատարողական թերթը տված դատարան:

2. Եթե դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը չի համապատասխանում սույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին, ապա հարկադիր կատարողը դիմումատուին է վերադարձնում դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը:

3. Կատարողական թերթը կամ դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը վերադարձնելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

4. Դատարանը կատարողական թերթը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկում է թույլ տված սխալները և նոր կատարողական թերթ ուղարկում հարկադիր կատարման ծառայություն:

5. Դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը վերադարձնելն արգելք չէ թույլ տրված խախտումները վերացնելուց հետո դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման նոր դիմում ներկայացնելու համար:»:

Հոդված 19. Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Դատարանի կողմից պարտապանի գույքի նկատմամբ հայցի ապահովման միջոց կիրառված լինելու և այն վերացված չլինելու դեպքում կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է տասնհինգօրյա ժամկետ: Կատարողական գործողությունների իրականացման տասնհինգօրյա ժամկետում չեն հաշվարկվում սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները:

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքում, եթե ապահովման միջոցը չի բավարարում հայցի պահանջն ամբողջությամբ կատարելու համար, կատարողական գործողությունների իրականացման ժամկետը երկարաձգվում է ևս քառասունհինգ օրով: Կատարողական գործողությունների իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:»:

Հոդված 20. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) Վերնագիրը «Կատարողական» բառից առաջ լրացնել «Դատական ակտի կամ» բառերով.

2) 1-ին մասը «Կատարողական» բառից առաջ լրացնել «Դատական ակտում կամ» բառերով.

3) 2-րդ մասի 1-ին նախադասությունը «Կատարողական» բառից առաջ լրացնել «Դատական ակտը կայացրած կամ» բառերով:

Հոդված 21. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 37. Կատարողական վարույթը կասեցնելու հարկադիր կատարողի պարտականությունը**

1. Հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե՝

1) պարտապանը ճանաչվել է անգործունակ.

2) պարտապանը զինված ուժերի և այլ զորքերի կազմում մասնակցում է մարտական գործողությունների, կամ առկա է նմանատիպ պայմաններում գտնվող պահանջատիրոջ խնդրանքը.

3) գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի

և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը.

4) դատարանը գործ է հարուցել պարտապանին սնանկ ճանաչելու մասին կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պարտապան բանկին անվճարունակ է ճանաչել.

5) պարտապանի գույքը մինչև դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելը արգելադրվել է ապահովման վարույթով կամ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով, և պարտապանը չունի այլ գույք և եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել.

6) դատարանը որոշում է կայացրել (այդ թվում՝ հայցի կամ վճռի կատարման ապահովման վերաբերյալ) կատարողական վարույթը կասեցնելու մասին.

7) առկա է հաշտության համաձայնություն կնքելու մասին կողմերի դիմումը.

8) վարչական դատարանը վարույթ է ընդունել կատարման ենթակա դրամական պահանջի վերաբերյալ հայց.

9) դիմել է դատական ակտը կայացրած կամ կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար.

10) նշանակել է փորձաքննություն.

11) պարտապանը ներգրավվել է որևէ պետական հանձնարարության կատարման մեջ.

12) պարտապան-իրավաբանական անձը վերակազմակերպվում է.

13) պարտապանը կամ նրա գույքը հետախուզվում է.

14) պարտապանը գտնվում է ժամկետային զինվորական ծառայության մեջ՝ եթե նրա բացակայությունն անհնար է դարձնում կատարողական գործողությունների իրականացումը.

15) դիմել է դատարան անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հայցով:

2. Եթե դատարանը որոշում է կայացրել (այդ թվում՝ հայցի կամ վճռի կատարման ապահովման վերաբերյալ) առանձին կատարողական գործողություններ կասեցնելու մասին, ապա հարկադիր կատարողը կասեցնում է կատարողական վարույթը այդ մասով, իսկ մնացած մասով կատարողական գործողությունները շարունակվում են:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում հարկադիր կատարողը չի կասեցնում կատարողական վարույթը, եթե սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշման հետ միաժամանակ ստացել է դատարանի ծանուցումը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ: Այդ դեպքում պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջը կարող է բավարարվել միայն գրավի առարկայի իրացման հաշվին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 10-ից 15-րդ կետերով նախատեսված դեպքերում հարկադիր կատարողը կարող է չկասեցնել կատարողական վարույթը, եթե գտնում է, որ այն չկասեցնելը չի առաջացնի սույն օրենքով կատարողական վարույթի իրականացման համար նախատեսված ընդհանուր ժամկետի խախտում:»:

Հոդված 22. Օրենքի 38-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենքի 39-րդ հոդվածը լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերով կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված դեպքում՝ դատարանի համապատասխան ծանուցման հիման վրա:

4. Եթե կատարողական վարույթը սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կասեցնելու որոշումը հրապարակելուց հետո պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջատերը դիմում է հարկադիր կատարողին՝ կատարողական գործողությունները վերսկսելու և բռնագանձումը բացառապես գրավի առարկայի վրա տարածելու դիմումով, ապա հարկադիր կատարողն այդ մասով վերսկսում է կատարողական գործողությունները՝ մնացած մասով պահպանելով կատարողական վարույթի (վարույթների) կասեցումը:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերում պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջը կարող է բավարարվել միայն գրավի առարկայի իրացման հաշվին:»:

Հոդված 24. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից հանել «տուգանքների բռնագանձման և» բառերը:

Հոդված 25. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետում «կատարողական թերթը վերադարձնելու մասին» բառերը փոխարինել «կատարողական վարույթն ավարտելու մասին» բառերով,

բ. 2-րդ կետում «պարտապանի» բառից հետո լրացնել «կամ նրա գույքի» բառերը,

գ. ուժը կորցրած ճանաչել 2.1 կետը,

դ. 5-րդ կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Կատարողական վարույթն ավարտելը արգելք չէ դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման նոր դիմում ներկայացնելու համար:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:»:

Հոդված 26. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկադիր կատարողը կարճում է ընթացիկ, կասեցված կամ ավարտված կատարողական վարույթը, եթե՝».

բ. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի պարտականությունները փաստացի կատարվել են կամ դադարել են այլ հիմքով».

գ. 2-րդ կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով,

դ. 6-րդ կետը «դատական ակտը» բառերից հետո լրացնել «, որը ներկայացվել էր կատարման կամ»,

ե. 7-րդ կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտը կամ» բառերով,

զ. լրացնել 11-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«11) սույն օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով չկասեցված, սույն օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ մասով կամ սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերով վերսկսված կամ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված ծանուցումից հետո հարուցված կատարողական վարույթով բռնագանձումը տարածվել է գրավի առարկայի վրա».

2) 1.1-րդ մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով.

3) լրացնել նոր՝ 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա կարճված կատարողական վարույթը վերսկսվում է նաև՝

1) «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված դեպքում՝ դատարանի համապատասխան ծանուցման հիման վրա: Այդ դեպքում պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջը կարող է բավարարվել միայն գրավի առարկայի իրացման հաշվին.

2) պահանջատիրոջ դիմումով, եթե կատարողական թերթով սահմանված պարտավորությունները չեն կատարվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և պարտապանը չի ազատվել այդ պարտավորություններից:»:

Հոդված 27. Օրենքը լրացնել 42.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 42.1. Պարտապանի պարտականությունների փաստացի կատարումը

1. Կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի պարտականությունները համարվում են փաստացի կատարված, եթե դատական ակտի կամ կատարողական թերթի պահանջն ամբողջությամբ կատարվել է, ինչպես նաև վճարվել են կատարողական գործողությունների կատարման ծախսերը:

2. Դատական ակտի կամ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված է համարվում այն պահին, երբ պահանջատերն ընդունել է կատարումը կամ իմացել է կամ կարող էր իմանալ կատարումն ընդունելու հնարավորության մասին: Դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթով փաստացի կատարման պահ է համարվում նաև բռնագանձման ենթակա գումարը հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին գանձվելու պահը:

Հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել կատարումն ընդունելու հնարավորության մասին պահանջատիրոջը տեղեկացնելու ուղղությամբ, սակայն այդ մասին հարկադիր կատարողի ծանուցումը պահանջատիրոջ կողմից ստացված չլինելն արգելք չէ կատարողական վարույթը կարճելու համար:

3. Եթե դատական ակտուվ կամ կատարողական թերթով պարտավորության կետանցի համար սահմանվում է տոկոսների կամ տուժանքի հաշվարկ՝ մինչև պարտավորության փաստացի կատարման պահը, ապա այդ հաշվարկը չի կատարվում այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում, ապահովման վերաբերյալ հարուցված և չկարճված կատարողական վարույթի առկայության պայմաններում, պահանջատերը գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հարկադիր կատարման ծառայություն չի ներկայացրել այդ ակտի կամ դրա վրա հիմնված կատարողական թերթի կատարման դիմում»:

Հոդված 28. Օրենքի 43-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դատական ակտով կամ կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա:

Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պահանջատիրոջ պահանջի ապահովման համար գրավ դրված՝ պարտապանի գույքի վրա:

Եթե դատական ակտի կամ կատարողական թերթի պահանջը չի կարող կատարվել սույն մասով սահմանված կարգով, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել:»:

Հոդված 29. Օրենքի 44.1 հոդվածում՝

1) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) առկա է սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետ.

«4) արգելադրված գույքը հարկադիր կատարողի կողմից իրացվել է:»:

Հոդված 30. օրենքի 48-րդ հոդվածի վերնագիրը, 1-ին պարբերությունը, 64-րդ և 65-րդ հոդվածների 1-ին մասերը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտում կամ» բառերով:

Հոդված 31. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության առաջին նախադասությունը «իրավունք ունի» բառերից հետո լրացնել «մեկամսյա ժամկետում դատական կարգով» բառերով:

Հոդված 32. Օրենքի 52-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 52. Պարտապանի գույքի պահատվությունը**

1. Հարկադիր կատարողն արգելանքի տակ դրված գույքն ի պահ է հանձնում պարտապանին, պահանջատիրոջը կամ այլ անձանց՝ համապատասխան ստացականի հիման վրա:

2. Եթե արգելադրված գույքը գրավի առարկա է, ապա այն ի պահ է հանձնվում գրավառուին, իսկ վերջինս էլ պարտավոր է ընդունել այն ի պահ, եթե համաձայնություն չի տալիս արգելադրված գույքն այլ անձի ի պահ հանձնելու վերաբերյալ:

Հոդված 33. Օրենքի 53.1-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտին կամ» բառերով.

2) 3-րդ մասի վերջին պարբերությունը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտում կամ» բառերով:

Հոդված 34. Օրենքը լրացնել նոր՝ 7.1 գլխով հետևյալ խմբագրությամբ.

«**ԳԼՈՒԽ 7.1**

ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 65.1. Ապահովման վերաբերյալ դատական ակտի կամ կատարողական թերթերի կատարումը

Հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման վերաբերյալ դատական ակտերը կամ կատարողական թերթերը (այսուհետ՝ ապահովման վերաբերյալ

դատական ակտեր կամ կատարողական թերթեր) կատարվում են սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 65.2. Կատարողական վարույթ հարուցելը

Հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման վերաբերյալ կատարողական վարույթ (այսուհետ՝ ապահովման վարույթ) հարուցվում է դատարանից ստացված դատական ակտի կամ կատարողական թերթի հիման վրա: Ապահովման վարույթ հարուցելու համար դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում չի ներկայացվում:

Հոդված 65.3. Ապահովման սահմանները

1. Ապահովման վարույթով գույքի վրա դրված արգելանքն արգելք չէ պարտապանի գույքն այլ կատարողական վարույթով իրացնելու համար, եթե այդ կատարողական վարույթով դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը ներկայացվել է մինչև դատարանի կողմից հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշում կայացնելը:

2. Եթե մինչև բռնագանձման մասին դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում ներկայացնելը դատարանն այլ գործով հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշում է կայացրել նույն պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին, ապա բռնագանձումը կարող է տարածվել միայն այն գույքի վրա, որը՝

1) այլ գործով հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշման հիման վրա արգելադրված չէ, կամ

2) թեև արգելադրված է այլ գործով հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշման հիման վրա, սակայն դրա արժեքը բավարար է ինչպես հայցի կամ վճռի կատարման ապահովման, այնպես էլ բռնագանձման մասին դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման համար, կամ

3) արգելադրվել է բռնագանձման պահանջով հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշման հիման վրա, որը կայացվել է ավելի վաղ, քան այլ գործով հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշումը, կամ

4) գրավադրված է բռնագանձման պահանջի ապահովման համար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի կամ վճռի կատարման ապահովման որոշման հիման վրա արգելադրված գույքի վրա բռնագանձում չի տարածվել, և եթե դատարանի որոշմամբ ապահովված հայցը բավարարվել է, իսկ կողմը համապատասխան դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմում է ներկայացրել, ապա պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելիս միևնույն հերթի պահանջներից առաջին հերթին բավարարվում են դատարանի որոշմամբ ապահովված պահանջները:

Հոդված 65.4. Ապահովման վարույթն ավարտելը և կարճելը

1. Ապահովման վարույթը չի կարող ավարտվել սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով:

2. Ապահովման վարույթը կարող է կարճվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով, ինչպես նաև հայցը բավարարելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով:

Հոդված 65.5. Ապահովման վարույթը վերսկսելը

Եթե դատական գործով, որով արձակվել է ապահովման վերաբերյալ դատական ակտը կամ տրվել է ապահովման վերաբերյալ կատարողական թերթը, կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի կամ դրա հիման վրա տրված կատարողական թերթի կատարման դիմում է ներկայացվել հարկադիր կատարման, ապա ապահովման վարույթը վերսկսվում է որպես նոր կատարողական վարույթ:»:

Հոդված 35. Օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե կատարողական վարույթն ավարտվել է սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով կամ կարճվել է սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ապա փաստացի կատարված կատարողական գործողությունների ծախսերը բռնագանձվում են պահանջատիրոջից դատական կարգով:»:

Հոդված 36. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի յոթերորդ ենթակետի «ըստ կատարողական թերթի ներկայացման» բառերը փոխարինել «ըստ դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումի ներկայացման» բառերով, իսկ վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Միևնույն հերթի պահանջատերերի կողմից դատական ակտերի կամ կատարողական թերթերի կատարման դիմումները նույն օրը ներկայացված լինելու դեպքում դատական ակտերի կամ կատարողական թերթերի պահանջները բավարարվում են բավարարման ենթակա գումարներին համամասնորեն:».

2) լրացնել նոր՝ 2.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքի իրացումից, եթե դատական ակտով կամ կատարողական թերթով այլ բան նախատեսված չէ: Այդ դեպքում գրավառուն չի օգտվում գրավի վրա հիմնված նախապատվության իրավունքից:».

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 37. Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քաղաքացին կամ պաշտոնատար անձը հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում ենթակա է օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվության»:

Հոդված 38. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 72.1 հոդվածը:

Հոդված 39. Օրենքի 73.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերում հանել «տուգանքների և» բառերը:

Հոդված 40. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված կատարողական թերթի կատարումն իրականացվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նախատեսված կարգով:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 101-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայցը մերժելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայցի ապահովումը վերանում է, եթե հայցը բավարարելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պահանջատերը դատական ակտի կատարման դիմում ներկայացնելու ժամկետում համապատասխան դիմում չի ներկայացնում հարկադիր կատարման ծառայություն:»:

Հոդված 2. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը:

Եթե վճիռը ենթակա է հարկադիր կատարման, ապա վճռի եզրափակիչ մասում նշվում է, որ կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Բացի այդ, նշվում է նաև պահանջատիրոջ կողմից հարկադիր կատարման ծառայություն դատական ակտի կատարման դիմում ներկայացնելու ժամկետը:

Եթե վճիռը ենթակա չէ հարկադիր կատարման, ապա վճռի եզրափակիչ մասում նշվում է այդ մասին»:

Հոդված 3. Օրենսգրքի 203-րդ հոդվածը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտը կայացրած կամ» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 204^8-րդ հոդվածի 2-րդ նախադասությունը հանել, իսկ 3-րդ նախադասությունում «կատարողական թերթում» բառերը փոխարինել «դատական ակտում» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 4-րդ մասը «դեպքերում» բառից հետո լրացնել «՝ միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 214-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո վերաքննիչ դատարանն իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է կասեցնել բողոքարկվող դատական ակտի կատարումը:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը 3-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ.

«Եթե կատարողական վարույթը կասեցնելու որոշումը հրապարակելուց հետո պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջատերը դիմում է հարկադիր կատարողին՝ կատարողական գործողությունները վերսկսելու և բռնագանձումը բացառապես գրավի առարկայի վրա տարածելու համար, ապա հարկադիր կատարողն այդ մասով վերսկսում է կատարողական գործողությունները՝ մնացած մասով պահպանելով կատարողական վարույթի (վարույթների) կասեցումը: Այդ դեպքում պահանջատերը, անկախ գրավով ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ «զ» ենթակետով.

«զ) վերանում են հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման կարգով պարտապանի գույքի վրա դրված արգելանքները, եթե հայցը բավարարելու մասին վճիռը մտել է օրինական ուժի մեջ».

2) լրացնել նոր՝ 3.1 մաս հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված ծանուցման մասին դատարանն անհապաղ հայտնում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը և սնանկության ժամանակավոր կառավարչին (կառավարչին):»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի 232-րդ հոդվածի «ա» կետի 2-րդ նախադասությունում «դատարանի կատարողական թերթը դեռևս ստացած չլինելու» բառերը փոխարինել դատարանի՝ ապրանքների բացթողնման կասեցումը երկարաձգող հայցի ապահովման միջոց (ժամանակավոր միջոց) կիրառելու մասին որոշում դեռևս կայացրած չլինելու» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 97-րդ և 98-րդ հոդվածները «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Անցած ժամանակի համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ դատական ակտի կամ կատարողական թերթի հիման վրա ալիմենտի բռնագանձում կատարվում է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կամ համապատասխան դատական ակտը ուժի մեջ մտնելուն կամ կատարողական թերթը ներկայացնելուն նախորդած եռամյա ժամկետի ընթացքում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի 1-ին պարբերությունը «որոշման» բառից հետո լրացնել «ուժի մեջ մտնելուց» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտին կամ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 35.4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասությունը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտերի կամ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-40-Ն օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. 2-րդ կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտի կամ» բառերով,

բ. 6-րդ կետը «կատարողական» բառից առաջ լրացնել «դատական ակտում կամ» բառերով,

գ. 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) դատական ակտում կամ կատարողական թերթում նշված պահանջների պարզ չլինելու դեպքում դիմելու դատական ակտը կայացրած կամ կատարողական թերթ տված դատարան՝ պարզաբանելու դրա կատարման կարգը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացում արդիական են մի շարք օրենսդրական և կիրառական խնդիրներ, որոնք խոչընդոտում են կատարողական վարույթում կողմերի իրավունքների և օրինական շահերի լիարժեք ապահովմանը, դատական ակտերի արդյունավետ և ժամանակին կատարմանը, ինչպես նաև պատճառ են դառնում հարկադիր կատարողների և դատարանների անհարկի ծանրաբեռնվածության: Մասնավորապես՝

1) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում սահմանված՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի շրջանակը բացառություն չի նախատեսում իրենց բնույթով հարկադիր կատարման ոչ ենթակա ակտերի համար:

Այսպես, հարկադիր կատարման ենթակա չեն կարող լինել դատարանների ճանաչողական վճիռները, քանի որ որևէ իրաբահարաբերության կամ իրավաբանական փաստի առկայության ճանաչումը ինքնին հարկադիր կատարում չի ենթադրում: Այնինչ հարկադիր կատարման ենթակա ակտերի շրջանակի ներկայիս ընդհանրական սահմանման պարագայում հաճախ հարկադիր կատարման են ներկայացվում ակտեր, որոնք ենթադրում են ընդամենը իրավունքների պետական գրանցում կամ որոշակի գործողությունների կատարում իրավասու պետական մարմնի կողմից (օրինակ՝ սեփականության իրավունքի գրանցում):

Հարկադիր կատարման ենթակա չեն կարող լինել նաև քաղաքացիական դատավարության հատուկ վարույթներով կայացված վճիռները (օրինակ՝ քաղաքացուն անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու, անձանց ազգակցական հարաբերությունները ճանաչելու և իրավաբանական փաստեր հաստատող այլ վճիռները):

Հարկադիր կատարման ենթակա չեն կարող լինել նաև կողմերի հաշտության համաձայնությունը հաստատող վճիռների զգալի մասը: Երբեմն հարկադիր կատարման են ներկայացվում վճիռներ, որոնցով հաստատվում են կողմերի կնքած բավականին ծավալուն քաղաքացիաիրավական պայմանագրեր, որոնց տեքստը բառացիորեն շարադրվում է կատարողական թերթում: Բնական է, որ կողմերի մի շարք փոխկապակցված իրավունքներ և պարտականություններ նախատեսող պայմանագրի հարկադիր կատարումն իրատեսական չէ:

Առաջարկվող լուծումը. Ներկայացված նախագծում առաջարկվում է լրացում կատարել Օրենքի 2-րդ հոդվածում և սահմանել, որ հարկադիր կատարման ենթակա չեն այն ակտերը, որոնք հաստատում են կողմերի հաշտության համաձայնությունը (բացառությամբ պարտապանի դրամական պարտավորությունների հետաձգում կամ տարաժամկետում նախատեսող հաշտության համաձայնությունների), ինչպես նաև այն ակտերը, որոնք չեն պարունակում դրամական կամ այլ գույքային միջոցների փոխանցման կամ որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու պահանջ որևէ սուբյեկտի նկատմամբ:

Արդյունքում դատարանը դատական ակտ կայացնելիս կամ կատարողական թերթ տալիս յուրաքանչյուր դեպքում պետք է քննության առարկա դարձնի տվյալ ակտը հարկադիր կատարման ենթակա լինելու կամ չլինելու հանգամանքը:

Այս խնդրի հետ է կապված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող լրացումը, համաձայն որի՝ վճռի եզրափակիչ մասում չի նշվում վճիռը հարկադիր կատարման ենթակա լինելու մասին, եթե այն օրենքով ենթակա չէ հարկադիր կատարման:

2) Օրենքի 21-րդ հոդվածում կատարված լրացումը պայմանավորված է նրանով, որ կատարողական թերթի բովանդակության մեջ կնշվի կատարման ենթակա կոնկրետ գործողությունը: Մինչ այս լրացումը տարաբնույթ խնդիրներ էին առաջանում կատարողական վարույթի ընթացքում (օրինակ՝ կողմերը եկել են հաշտության համաձայնության և դատարանը վճռից բացի այն բառացիորեն նշում է կատարողական թերթում): Նշված լրացմամբ՝ կատարողական թերթում դատական ակտի եզրափակիչ մասից բացի՝ կնշվի նաև կատարման ենթակա կոնկրետ գործողությունը, որը կբացառի կատարողական վարույթի ընթացքում կողմերի միջև հակասությունները, ինչպես նաև կուղղորդի հարկադիր կատարողին հաշտության համաձայնությամբ պայմանավորված վճռի կատարողական վարույթում կատարվելիք գործողությունների առումով:

3) Օրենքի 23-րդ հոդվածի կարգավորմամբ դատական ակտը կամ **կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետի հարցում հաշվի չեն առնվում պարտապանի պարտականությունների տարաժամկետում կամ պարբերական կատարում նախատեսող** դատական ակտի կամ **կատարողական թերթերի առանձնահատկությունները:**

Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտը կամ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը մեկ տարի է՝ սկսած դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից (դատական ակտերի դեպքում): Այնինչ մի շարք գործերով պարտապանի՝ դատական ակտով սահմանված պարտականությունների կատարումը ենթադրվում է ոչ թե անմիջապես դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից, այլ դրանից հետո՝ որոշակի ժամանակահատվածում:

Այսպես, ալիմենտների վճարումը սովորաբար սահմանվում է որոշակի ժամանակահատվածում, մասնավորապես՝ մինչև երեխաների չափահաս դառնալը: Կամ, որոշ դեպքերում գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռները նախատեսում են պարտապանի պարտականությունների կատարման տարաժամկետում՝ սահմանելով վճարման ժամանակացույց: Նման դեպքերում, հնարավոր է, որ պարտապանը սկզբնական շրջանում բարեխղճորեն կատարի դատական ակտով սահմանված իր պարտականությունները, և հարկադիր կատարման անհրաժեշտություն չլինի, սակայն հետագայում՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարին անցնելուց հետո, խուսափի իր պարտականությունների կատարումից: Այդ դեպքում պահանջատիրոջը հարկադիր կատարման հնարավորությունից զրկելն անկասկած կհանգեցնի նրա օրինական շահերի խախտման և նոր անհարկի դատական գործընթացների:

Առաջարկվող լուծումը. Խնդրի կարգավորման նպատակով առաջարկվում է Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում, որի համաձայն՝ պարտապանի պարտականությունների տարաժամկետում կամ պարբերական կատարում նախատեսող դատական ակտը կամ կատարողական թերթերը կարող են կատարման ներկայացվել պարտականությունների տարաժամկետման կամ պարբերական կատարման ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև այդ ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում:

4) Օրենքում ամբողջապես կարգավորված չէ հարկադիր կատարողի որոշումը կատարողական վարույթի կողմերին ուղարկելու կարգը:

Ներկայիս խմբագրությամբ Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը հղում է կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին՝ «պատշաճ ծանուցում» հասկացության մասով: Սակայն չկարգավորված են մնում հասցեատիրոջ կողմից հասցեն փոխելու և դրա հետևանքների հարցը:

Առաջարկվող լուծումը: Վերը նշված հարցերն առաջարկվում է լուծել ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարական նորմերի համանմանությամբ:

Առաջարկվում է նաև նախատեսել հարկադիր կատարողի որոշումն էլեկտրոնային փոստով ուղարկելու հնարավորությունը՝ կողմի համապատասխան դիմումի դեպքում, ինչի շնորհիվ ծանուցման գործընթացը կդառնա պակաս ժամանակատար և ծախսատար: Առաջարկվում է նաև հարկադիր կատարողի որոշումը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ այն դեպքում, երբ հասցեատերը փոխել է հասցեն, և նոր հասցեն հայտնի չէ:

5) Առկա են որոշակի խնդիրներ՝ կապված պարտապանի կողմից գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր ներկայացնելու օրենսդրական կարգավորման հետ:

Մասնավորապես, Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթ հարուցելուց հետո հայտարարագիր է վերցնում պարտապանից նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին, եթե կատարողական վարույթ հարուցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, պարտապանը չի կատարում կատարողական թերթի պահանջները:

Նման ձևակերպումը կարող է ոչ միանշանակ մեկնաբանության տեղիք տալ: Մասնավորապես, այն մեկնաբանությունը, ըստ որի՝ կատարողական վարույթ հարուցելուց հետո 10 օրվա ընթացքում հարկադիր կատարողն իրավասու չէ որևէ հարկադրանքի միջոց կիրառել, հակասում է հարկադիր կատարման բուն նպատակին, քանի որ այդ դեպքում անբարեխիղճ պարտապանները հնարավորություն կունենան օտարելու իրենց պատկանող գույքը և ըստ էության անհնարին դարձնելու կամ դժվարացնելու կատարողական թերթի պահանջների կատարումը:

Առաջարկվող լուծումը. Առաջարկում ենք վերացնել պարտապանից նրա գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր վերցնելու համար կատարողական թերթի պահանջը 10-օրյա ժամկետում կամավոր չկատարելու պայմանը:

Օրենքի 34-րդ հոդվածում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է գործարար միջավայրի բարելավմամբ, ինչը նախատեսված է ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 240-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2013 թվականի միջոցառումների ծրագրի 6.3-րդ կետով: Ներկայումս Օրենքով կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է երկամսյա ժամկետ: Խնդիր է առաջացել ժամկետի հետ կապված, երբ գույքն առկա է և այն հայտնաբերելու կարիք չկա: Նախագծով դատարանի կողմից պարտապանի գույքի նկատմամբ հայցի ապահովման միջոցի կիրառելու դեպքում կատարողական գործողությունների իրականացման

համար տասնհինգօրյա ժամկետի սահմանումը հնարավորություն կտա էլ ավելի արագ ապահովել կատարողական գործողությունների կատարումը:

6) Որոշակի խնդիրներ կան՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքում նախատեսված՝ պարտատերերի պահանջների բավարարման մորատորիումի և կատարողական վարույթի հարաբերակցության հետ կապված:

6.1) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով. կարճվում են նաև գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները:

Խնդիր է ծագում հայցի ապահովման վերաբերյալ հարուցված կատարողական վարույթների վերաբերյալ, որոնք չեն կարող համարվել գույքային բռնագանձման վերաբերյալ վարույթ: Այս դեպքում, եթե դատական գործը, որով տրվել է հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթը, ընթացքի մեջ է, ապա մորատորիումի արդյունքում տվյալ դատական գործը պարտապանի մասով կարճվում է, ինչն էլ հիմք է հայցի ապահովման վերաբերյալ կատարողական վարույթը կարճելու համար: Սակայն եթե դատական գործն ավարտված է, և հայցը բավարարվել է, սակայն բռնագանձման վերաբերյալ կատարողական թերթ չի ներկայացվել հարկադիր կատարման, ապա հայցի ապահովման վարույթի և դրա շրջանակներում կիրառված արգելանքների ճակատագիրը մնում է անորոշ:

Առաջարկվող լուծումը. Առաջարկում ենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածում սահմանել, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վերանում են հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման կարգով պարտապանի գույքի վրա դրված արգելանքները, եթե հայցը բավարարելու մասին վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

6.2) 2011թ. հունիսի 23-ին ընդունվել և օգոստոսի 6-ին ուժի մեջ են մտել ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և ««Սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Դրանցով, մասնավորապես, պարտատերերի պահանջների բավարարման մորատորիումը կանոնակարգող՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-

րդ մասը լրացվել է «գ» և «դ» կետերով, համաձայն որոնց՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում.

գ) գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին.

դ) ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

Միաժամանակ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը լրացվել է նոր մասով, որի համաձայն՝ հարկադիր կատարողը չի կասեցնում կատարողական վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը պետք է դիտարկել ոչ թե կատարողական վարույթը չկասեցնելու, այլ կասեցված վարույթը վերսկսելու հիմք, քանի որ «գ» կետը կիրառելի է այն պայմանով, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին: Իսկ նման ծանուցումը ժամանակային առումով հաջորդում է սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուն, ինչն ինքնին, համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, կատարողական վարույթը կասեցնելու հիմք է:

Բացի այդ, համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման հաշվին: Այդ դեպքում պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում չի սահմանվել նման դեպքերում գրավի առարկայից բացի պարտապանի այլ գույքի վրա բռնագանձում չտարածելու՝ հարկադիր կատարողի պարտականությունը:

Ինչ վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետին, ապա այն չի կարող տարածվել կատարողական վարույթով պարտապան հանդիսացող երաշխավորների և երաշխիք տված անձանց վրա, որոնց վերաբերյալ սնանկության դիմումը վարույթ է ընդունվել, քանի որ հակառակ պարագայում կստացվի նույն գույքի բռնագանձման վերաբերյալ երկու վարույթ՝ սնանկության և կատարողական:

Առաջարկվող լուծումը. Առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասը՝ փոխարենը նույն օրենքի 39-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, որով կսահմանվի կասեցված կատարողական վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի հիման վրա վերսկսելու և բռնագանձումը բացառապես գրավի առարկայի վրա տարածելու՝ հարկադիր կատարողի պարտականությունը: Միաժամանակ, որպես հետևանք, առաջարկում ենք նման վարույթների համար սահմանել կատարողական վարույթը կարճելու նոր հիմք՝ բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելը (անկախ նրանից՝ կատարողական թերթի պահանջն ամբողջությամբ կատարվել է, թե ոչ):

7) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով թերի են կարգավորվում կատարողական վարույթի կասեցման հիմքերը: Առաջարկվում է հստակեցնել կատարողական վարույթի կասեցման որոշ հիմքեր, ինչպես նաև օրենքով ամրագրել նոր հիմքեր, որոնց առկայությունը գործնականում կասեցնում է կատարողական գործողությունները:

Օրենքի 37-րդ հոդվածում, որը սահմանում է կատարողական վարույթը կասեցնելու՝ հարկադիր կատարողի պարտականության հիմքերը.

Առաջարկում ենք գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթի կասեցման հիմք համարել ոչ թե գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացվելու փաստը, այլ կատարողական վարույթի կամ առանձին կատարողական գործողությունների կասեցման մասին դատարանի որոշումը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացվելու դեպքում գույքի իրացումը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասու մարմինը դատարանն է:

Առաջարկում ենք նաև որպես կատարողական վարույթի կասեցման հիմք սահմանել պարտապանի գույքը հայցի (վճռի կատարման) ապահովման վարույթով արգելադրված լինելու փաստը, եթե պարտապանը չունի այլ գույք և եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել, ինչը բխում է Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից:

Առաջարկում ենք նաև որպես կատարողական վարույթի կասեցման հիմք սահմանել պարտապանի գույքը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված

կարգով արգելադրված լինելու փաստը, որի հետևանքները կատարողական վարույթում ներկայումս կարգավորված չեն:

Առաջարկում ենք լրացնել երկու նոր հիմք, որոնք վերաբերում են ոչ գույքային բնույթի պահանջներով կատարողական թերթերի կատարմանը: Մասնավորապես, նման վարույթները կասեցնելու անհրաժեշտություն է առաջանում, երբ պարտապանը, որը, ըստ կատարողական թերթի, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ, անցնում է ժամկետային զինվորական ծառայություն: Ոչ գույքային բնույթի կատարողական վարույթները կասեցնելու անհրաժեշտություն է առաջանում նաև այն դեպքում, երբ հարկադիր կատարողը դիմում է դատարան պարտապանին կամ այլ անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցով:

8) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում գրավով ապահովված պահանջների հարկադիր կատարման ընթացքում բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու առաջնահերթությունը, ինչը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասից:

Գրավի՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոցի էությունից, և մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ գրավառուն իր պահանջների բավարարման նպատակով առաջին հերթին կարող է պահանջել գրավի առարկայի իրացում, և միայն հետո՝ գրավատուի այլ գույքի իրացում: Այնինչ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, սահմանելով պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հերթականությունը, չի առանձնացնում գրավի առարկա հանդիսացող գույքը:

Առաջարկվող լուծումը. Նախագծով առաջարկում ենք խմբագրել Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասը՝ սահմանելով պահանջատիրոջ պահանջի ապահովման համար գրավ դրված՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու առաջնահերթությունը, եթե պարտապանի դրամական միջոցները բավարար չեն կատարողական թերթի պահանջը կատարելու համար:

Այս խնդրի հետ է կապված նաև Օրենքի 69-րդ հոդվածում առաջարկվող լրացումը, համաձայն որի, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասից, առաջարկվում է հստակեցնել, որ գրավով ապահովված պահանջատերը չի օգտվում բռնագանձված գումարների բաշխման առաջնահերթության իրավունքից, եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը բավարար չի եղել գրավառուի պահանջները բավարարելու համար, և գրավառուն բավարարում է ստանում պարտապանի այլ գույքից:

9) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով խիստ թերի են կարգավորված

հայցի ապահովման (հավասարապես՝ վճռի կատարման ապահովման) վերաբերյալ դատարանի որոշումների կատարման առանձնահատկությունները և հայցի ապահովման վերացման հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում հայցի ապահովման վերաբերյալ դատական ակտի կամ կատարողական թերթերի կատարման առանձնահատկությունները, ինչը լուրջ գործնական խնդիրներ է առաջացնում:

Այսպես, Օրենքը նախատեսում է կատարողական թերթը ետ պահանջելու՝ պահանջատիրոջ իրավունքը, ինչը հիմք է կատարողական վարույթն ավարտելու և կիրառված արգելանքները վերացնելու համար: Սակայն նշվածը չի կարող կիրառելի լինել հայցի ապահովման կատարողական վարույթների նկատմամբ, քանի որ դատական գործի վարույթի ընթացքում հայցի ապահովումը կարող է վերացվել բացառապես դատարանի որոշմամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ հայցի ապահովման միջոցը կարող է կիրառվել ոչ միայն հայցվորի միջնորդությամբ, այլ նաև դատարանի նախաձեռնությամբ, ապա հայցվորի (պահանջատիրոջ) իրավունքը՝ հետ պահանջելու հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթը, առավել ևս իրավաչափ չի կարող համարվել:

Օրենքում կարգավորված չէ նաև հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթերի և մինչև դրանց ներկայացումը հարուցված՝ գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթների հարաբերակցության հարցը: Օրենսդրական այդ բացը տեղիք է տալիս ոչ միանշանակ մեկնաբանությունների և երբեմն անբարեխիղճ պարտապաններին հնարավորություն է տալիս շինծու հայցերի հիման վրա ներկայացնել հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթեր և ձգձգել գործն ըստ էության լուծող դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերի կատարումը:

Օրենքով կարգավորված չեն նաև հայցի ապահովման վերաբերյալ կատարողական վարույթի կարճման հիմքերը:

Օրենսդրական բացեր կան նաև հայցի ապահովման վերացման հիմքերի սահմանման առումով: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ մասը, նախատեսելով հայցի ապահովման վերացումը հայցը մերժելու դեպքում, նույնը չի սահմանում գործի վարույթը կարճվելու դեպքում (ինչը ենթադրվում է՝ ելնելով գործի վարույթի կարճման հիմքերից և հետևանքներից): Նման իրավիճակը կրկին առաջացնում է օրենքի ոչ միատեսակ մեկնաբանություն և անալոգիայի անհարկի կիրառում:

Բացի այդ, կարգավորված չէ հայցի ապահովման միջոցների ճակատագիրն այն դեպքում, երբ հայցը բավարարվել է, սակայն համապատասխան կատարողական

թերթ չի ներկայացվել հարկադիր կատարման: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Սակայն որոշ դեպքերում հայցվորն ինչ-ինչ պատճառներով գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական թերթը չի ներկայացնում հարկադիր կատարման, և պատասխանողի գույքն անորոշ ժամկետով մնում է արգելադրված վիճակում: Նման իրավիճակն էապես խախտում է ինչպես պատասխանողի, այնպես էլ նրա նոր պարտատերերի իրավունքները, քանի որ համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին կատարողական թերթ ներկայացնելիս պարզվել է, որ մինչև կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրը նույն պարտապանի գույքի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, ապա բռնագանձումը կարող է տարածվել պարտապանի միայն այն գույքի վրա, որի նկատմամբ հայցի ապահովում չի կիրառվել:

Առաջարկվող լուծումը. Նախագծով առաջարկվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում նախատեսել առանձին գլուխ, որով կկարգավորվեն հայցի ապահովման և վճռի կատարման ապահովման (երկուսը միասին՝ ապահովման) վերաբերյալ դատական ակտի կամ կատարողական թերթերի կատարման առանձնահատկությունները:

Նախագծով առաջարկվում է հստակ կարգավորել նաև ապահովման վերաբերյալ կատարողական վարույթների և այլ վարույթների հարաբերակցությունը, ապահովման վերաբերյալ կատարողական վարույթների ավարտման և կարճման առանձնահատկությունները:

Առաջարկում ենք նաև խմբագրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ մասը և ամրագրել հայցի ապահովման վերացումը գործի վարույթը կարճվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հայցը բավարարվել է, սակայն հայցվորը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ 1 տարվա ժամկետում համապատասխան դատական ակտի կամ կատարողական թերթի կատարման դիմումը չի ներկայացրել հարկադիր կատարման ծառայություն:

10) Անորոշ է կատարողական վարույթի հետ կապված՝ դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ժամկետը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը մի շարք դեպքերում նախատեսում է դատական միջամտություն՝ միջանկյալ դատական ակտերի կայացման տեսքով: Մասնավորապես, դատարանը որոշումներ է կայացնում դատական ակտի կատարման հետաձգման կամ տարաժամկետման, կատարման եղանակի և կարգի փոփոխման վերաբերյալ (Օրենքի 22-րդ հոդված), դատական ակտի կամ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման վերաբերյալ (Օրենքի 24-րդ հոդված), վճռի կատարման

շրջադարձի վերաբերյալ (Օրենքի 27-րդ հոդված), կատարողական թերթի պարզաբանման վերաբերյալ (Օրենքի 35-րդ հոդված): Նշված բոլոր դեպքերում Օրենքը սահմանում է, որ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել, սակայն բողոքարկման ժամկետը քաղաքացիական դատավարության դեպքում անորոշ է:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2 հոդվածի, չի նախատեսում միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ընդհանուր ժամկետ՝ փոխարենը նման ժամկետ սահմանելով առանձին որոշումների դեպքերում:

Առաջարկվող լուծումը. Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանել միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման ընդհանուր՝ 15-օրյա ժամկետ՝ այն վերապահմամբ, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

11) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում առկա են նաև որոշ այլ խնդիրներ:

11.1) Այսպես, Օրենքի 2-րդ հոդվածը հարկադիր կատարման ենթակա ակտերի շարքում նշում է քրեական գործերով դատարանի դատավճիռները ու որոշումները՝ այդ թվում տուգանքների բռնագանձման մասով: Այնինչ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքում դեռևս 15.11.2006թ. ընդունված և 30.12.2006թ. ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն՝ եթե դատապարտյալը կամավոր չի վճարում տուգանքը, ապա այն ոչ թե բռնգանաձվում է հարկադիր կարգով, այլ փոխարինվում է հանրային աշխատանքներով: Հետևաբար, քրեական գործերով դատարանի դատավճիռները տուգանքների բռնագանձման մասով հարկադիր կատարման ենթակա չեն:

Մյուս կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի համաձայն՝ որպես դատարանի կողմից կիրառվող սանկցիա դատական տուգանք կիրառելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Առաջարկվող լուծումը. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է խմբագրել Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի և 73.1 հոդվածի համապատասխան դրույթները՝ դատավճռով որպես պատիժ նշանակված տուգանքների մասով:

11.2) Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց

չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:

Նշված վարչական պատասխանատվության միջոցները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.5 և 206.9 հոդվածներով: Սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանվել է, որ նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և լուծում են դատարանները՝ տվյալ դեպքում հարկադիր կատարողի հայցադիմումով: Այսինքն, հարկադիր կատարողն այլևս չի հանդիսանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.5 և 206.9 հոդվածներով որոշում կայացնելու իրավասու սուբյեկտ, ինչպես նշված է Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում:

Առաջարկվող լուծումը. Նախագծով առաջարկվում է խմբագրել Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը և ուժը կորցրած ճանաչել հարկադիր կատարողի նշանակած տուգանքների բռնագանձման կարգը սահմանող 72.1 հոդվածը:

11.3) Նախագծով առաջարկվում է նաև առավել հեշտ կիրառման նպատակով հստակեցնել Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ, 1-ին կետով և 67-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները:

12) ԴԱՀԿ մասին օրենքով նախատեսվում է որ կատարողական թերթը դատարանը տալիս է պահանջատիրոջը, իսկ վերջինս էլ այն ներկայացնում հարկադիր կատարման: Նման մոտեցումը ժամանակատար է, իսկ որոշ դեպքերում (օր. հայցի ապահովման միջոց անհապաղ կիրառելու դեպքում) անարդյունավետ:

Առաջարկվող լուծումը. Նախագծով առաջարկվում է կատարողական թերթը դատարանի կողմից դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո ուղարկել ԴԱՀԿ ծառայություն: ԴԱՀԿ ծառայությունը ապահովման վարույթներով ձեռնամուխ կլինի դատական ակտի կամ կատ. թերթի կատարմանը, իսկ եթե հարցը վերաբերվում է վերջնական դատական ակտի կատարմանը, ապա ԴԱՀԿ-ն այն ի կատար կածի, եթե դրա մասին դիմում կներկայացվի պահանջատիրոջ կողմից:

Ակնկալվող արդյունքը

Ներկայացված նախագծի ընդունման դեպքում էապես կբարելավվի դատական ակտերի հարկադիր կատարման ընթացքում առաջացող՝ վերը նկարագրված իրավահարաբերությունների կարգավորման մակարդակը՝ օրենսդրական կարգավորման լիարժեքության, տարբեր իրավական ակտերի միջև համապատասխանության ապահովման, օրենքի միատեսակ գործնական կիրառման և օրենսդրական տեխնիկայի տեսանկյուններից: Նշվածը դրականորեն կանդրադառնա ինչպես կատարողական վարույթում կողմերի իրավունքների և օրինական շահերի ապահովման վրա, այնպես էլ դատական ակտերի առավել արագ և ճշգրիտ կատարման վրա՝ վերջին հաշվով նպաստելով արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

Բացի այդ, առաջարկվող նախագիծը կնվազեցնի պայմանագրերի կիրարկմանն ուղղված քայլերի քանակը (առնվազն 2-ով), ինչը կբարելավի Համաշխարհային բանկի Doing business վարկանիշային դասակարգում ՀՀ դիրքերը:

Միաժամանակ, «Հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-8-րդ, 10-րդ, 12-18-րդ, 20-22-րդ, 25-28-րդ, 30-րդ, 33-34-րդ և 36-րդ հոդվածներում, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-4-րդ հոդվածներում, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարված փոփոխությունները և լրացումները («դատական ակտի կամ» բառերի մասին է) կատարվել են մշտապես գործող նախարարական պետահիրավական կոմիտեի նիստի 2013թ. հունիսի 20-ի 01/16.3/[159421]-13 արձանագրության 1-ին կետին համապատասխան:

Հիշյալ արձանագրության հիման վրա անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել նաև Հայաստանի Հանրապետության մաքսային և Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքերում, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքներում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի «Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 436, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպետատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 933-Ն, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» N 1205-Ն որոշումներում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի

բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: